ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Գ. Շիրակամուտ

N°—Ե -03/135

«23» 04. 2020թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ներկայացնում եմ Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 10-Ա ,11-Ա,12-Ա, 13-Ա,14-Ա և 15-Ա որոշումները:

Առդիր 9էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,,21" ապրիլի 2020 թվականի N10-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ.ԱՊՐԻԼԻ 21 -Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2020թվականի ապրիլի 21-ի հերթական նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող, տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
2. Շիրակամուտ համայնքի ավագանու անդամներ Գ.Նալբանդյանի և Զ.Իգիթխանյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:
3. Է.Մարկոսյանին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
4. Շիրակամուտ համայնքի ավագանու 17.07.2017թ. թիվ 17 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
5. Շիրակամուտ համայնքի 2020 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,,21''-ը ապրիլի 2020թվականի N 11-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով, « Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 33-րդ և 37-րդ հոդվածներով, համայնքի ավագանին որոշում է .

1. Հաստատել Շիրակամուտի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը /համաձայն հավելվածի/:
2. Շիրակամուտ գյուղական համայնքի ղեկավարին՝ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:
3. Ուժը կորցրած ճանաչել Շիրակամուտ համայնքի ավագանու 2020թ. հունվարի 24-ի թիվ 2-Ա որոշումը:
4. Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերը ուժի մեջ են մտնում Շիրակամուտի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/ 4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Հավելված
Շիրակամուտ գյուղական համայնքի ավագանու
, ,21″ ապրիլի 2020թ..թիվ 11 -Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ,ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 'ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 15

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական
	Քաղաքական և հայեցողական պաշտոններ			
1	Համայնքի ղեկավար	1	300000	300 000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	143000	143 000
3	Համայնքի ղեկավարի օգնական	1	97000	97000
4	**Ընդամենը**	**3**	**540000**	**540000**
	Համայնքային ծառայության պաշտոններ			
1	Աշխատակազմի քարտուղար	1	153000	153000
2	Գլխավոր մասնագետ	1	143000	143000
3	Առաջատար մասնագետ	3	122000	366000
4	Առաջին կարգի մասնագետ	1	96000	96000
5	**Ընդամենը**	**6**	**514000**	**758000**
	Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ			
1	Հավաքարար	0,5	110000	55000
2	Հավաքարար	0,5	105000	52500
3	Բակապահ	1	90000	90000
4	Վարորդ	1	90000	90000
5	Տեխնիկական աշխատող	1	115000	115000
6	Ջրաբաշխման գծով բանվոր	1	90000	90000
	Ընդամենը	5	600000	492500
	ԸՆԴԱՄԵՆԸ	14	1654000	1790500

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՐԱՆՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,, 21 " ապրիլի 2020 թվականի N12-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ Գ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԵՎ Զ.ԻԳԻԹԽԱՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ կետով և հաշվի առնելով ,որ Շիրակամուտ համայնքի ավագանու անդամներ Գոռ Արթուրի Նալբանդյանը և Զավեն Հենրիկի Իգիթխանյանը 2019 թվականի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել են համայնքի ավագանու կայացած բոլոր 9 նիստերից , համայնքի ավագանին

Որոշում է

Շիրակամուտ համայնքի ավագանու անդամներ Գոռ Արթուրի Նալբանդյանի և Զավեն Հենրիկի Իգիթխանյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/ 4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,,21''-ը ապրիլի 2020թվականի N13 -Ա

Է.ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,Տեղական ինքնակառավարման մասինե ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 17-ի ,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասինե թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով Էդուարդ Վարազդատի Մարկոսյանի դիմումը և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել Շիրակամուտ համայնքի բնակիչ Էդուարդ Վարազդատի Մարկոսյանի դիմումը և համայնքի բյուջեի 4729 հոդվածից նրան հատկացնել սոցիալական օգնություն՝ 30000/երեսուն հազար/ դրամի չափով.
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/ 4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Գյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,,21"-ը ապրիլի 2020թվականի N14 -Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17.07.2017Թ., ԹԻՎ 17 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, և հաշվի առնելով որ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Անահիտ Գրիգորյանը ազատվել է աշխատանքից,համայնքի ավագանին որոշում է.

Փոփոխություն կատարել Շիրակամուտ համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 17-ի ,,Հանձնաժողով կազմելու մասին,, թիվ 17-Ա որոշման մեջ՝
հանձնաժողովի կազմի 3-րդ կետում նշված «Անահիտ Գրիգորյան-համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի քարտուղար» բառերը փոխարինել «Սուսաննա Պետրոսյան –համայնքի ղեկավարի օգնական, հանձնաժողովի քարտուղար» բառերով,

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/ 4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,, 21" ապրիլի 2020 թվականի N 15-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ Ի-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի ղեկավարի՝ 2020 թվականի բյուջեի Ի-ին եռամսյակի կատարման ընթացքի մասին ներկայացրած հաղորդումը ,Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է .

1.Ընդունել ի գիտություն Շիրակամուտ համայնքի 2020 թվականի բյուջեի Ի-ին եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Հավելված
Շիրակամուտ համայնքի ավագանու
,,21″ ապրիլի 2020թ. N15 -Ա որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Շիրակամուտ համայնքի 2020թ.բյուջեն 1-ին եռամսյակի կտրվածքով կատարվել է ա/եկամուտների գծով 98,6 տոկոսով, նախատեսված 15073,1 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 14866,5հազար դրամ:
Սեփական եկամուտները,(հարկեր և տուրքեր,այլ եկամուտներ,մուտքեր հիմնական միջոցների իրացումից) նախատեսված 1470,9 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 1342,9հազար դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով կատարվել է 91,3%-ով:
Պաշտոնական դրամաշնորհների գծով (ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ) նախատեսված 12650,3հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 12924,1 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 102,2%:
բ/ Ծախսերի գծով կատարվել է 89,9 %-ով նախատեսված 16566,0 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսերը կազմել են 14904,5 հազար դրամ:

1.Վարչական բյուջեի եկամուտներ

Վարչական բյուջեի եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 15073,1 հազար դրամի դիմաց կազմել են14866,5հազար դրամ կամ կատարողականը կազմել է 98,6%

1.1 Հողի հարկ

Հողի հարկի գծով 3 ամսվա համար նախատեսված 758,9հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է544,1հազար դրամ կամ կատարողականը կազմել է 87,5 %

1.2 Գույքահարկ

Գույքահարկի գծով 3 ամսվա համար նախատեսված 622,0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է722,4 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 116,1%

1.3 Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 90,0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 76,1հազար դրամ կամ կատարողականը կազմել է 84,5 %:

1.4 Այլ եկամուտներ

Այլ եկամուտների գծով 3 ամսվա համար նախատեսված 1342,1 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 459,5հազար դրամ, 34,2%:
Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացումներ չեն կատարվել:
Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 3507,1 հազար դրամ:

2.Վարչական բյուջեի ծախսեր

Վարչական բյուջեի ծախսերը 3 ամսվա համար նախատեսված 16566,0 հազար դրամի դիմաց կատարվել է 15073,1 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 91%:

Ըստ գործառնական դասակարգման և ծրագրերի ծախսերը կատարվել են հետևյալ կերպ՝
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 56,6%:
Սոցիալական պաշտպանություն 48,6%:

3.Ֆոնդային բյուջեի ծախսեր

Ֆոնդային բյուջեով 3ամսվա համար նախատեսված է 3507,1հազար դրամ:

Տնտեսական հարաբերություններով մուտքագրվել է- 35,0 հազար դրամ:

Շիրակամուտ համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Առաջատար մասնագետ հաշվապահ՝ Ա.Մազմանյան